

Ջ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԵՎ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ

Մեծարգո մարզպետ, հարգարժան տիկին Պողոսյան, հարգարժան պարոն փոխնախարար, հարգելի հյուրեր, գործընկերներ.

Մանկավարժների այսօրվա մեր խորհրդակցությունում փորձելու ենք ամփոփել նախորդ ուսումնական տարվա արդյունքները, նախանշել մեկնարկող ուսումնական տարվա խնդիրները:

Նախորդ ուսումնական տարում մարզում գործել են 5 ավագ, 86 միջնակարգ և 21 հիմնական դպրոցներ: Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում կրթություն է ստացել 30 338 աշակերտ: 2542 աշակերտ ավարտել է 9-րդ, 1875-ը՝ 12-րդ դասարանները:

Մարզի ուսումնական հաստատությունները 2013-2014 ուս. տարին սկսել են ԿԳ նախարարի 2013թ. թիվ 730-Ն հրամանով՝ հաստատված օրինակելի ուսումնական պլանի համաձայն: Դպրոցների ֆինանսավորումն իրականացվել է՝ ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների կողմից սահմանված աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի համապատասխան գործակիցների կիրառմամբ: Տարիֆիկացիաները հաստատվել են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին>> համապատասխան:

Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտը Արարատի մարզում ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար:

2013-2014 ուսումնական տարում մարզի 112 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորել է միջն հաշվով 31997 աշակերտ, որը անցած ուսումնական տարվա համեմատ պակաս է 782-ով: Դասարանների թիվը նույն ժամանակահատվածում պակասել է 43-ով՝ կազմելով 1636: Աշակերտների թվի նվազման պատճառով դպրոցներում նկատվում է դասարանների միջին խտության անկում: Դասարաններում աշակերտների միջին խտությունը բարձրացնելու համար անհրաժեշտություն է առաջացել մարզի 9 դպրոցներում կոնպլեկտավորել 24 երկկոնպլեկտ դասարաններ:

2013-2014 ուսումնական տարում Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 62 երեխաների համար Նոր Խարբերդի N 2 միջնակարգ և Արտաշատի N 1 ու Արարատի N2 հիմնական դպրոցներում իրականացվել է ներառական կրթություն: Պարբերաբար իրականացվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում:

Մարզային ենթակայության 107 դպրոցում աշխատում է 4418 աշխատող, որոնցից 2623-ը ուսուցիչներ են, 275-ը աշխատում է մանկավարժական հաստիքներով, իսկ մնացած 1520-ը վարչական և ուսումնասօժանդակ անձնակազմի աշխատողներ են:

Մարզում ունենք 4 վաստակավոր մանկավարժ, պետական պարգևների, ՀՀ նախագահի, վարչապետի, ՀՀ ԿԳ նախարարի և մարզպետի շնորհակալագրերի և պատվոգրերի արժանացած շատ ուսուցիչներ: 7 ուսուցչի շնորհվել է որակավորման 1-ին տարակարգ:

Վերջին տարիների ընթացքում հետևողական աշխատանք է տարվել դպրոցներում աշխատող միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Միայն 2013թ հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ սովորելու է գործուղվել շուրջ 23 ուսուցիչ:

Ուսուցչական անձնակազմի հիմնական ուսումնական ծանրաբեռնվածությունը մարզում կազմում է 16.4 ժամ, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը՝ 10.5, դասարանների միջին խտությունը՝ 19.5 աշակերտ:

Մանկավարժական դրույքների թիվը 2159 է:

2013-2014 ուստարում Արարատի մարզում գործող 5 ավագ դպրոց /Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի, Ոսկետափ/ է հաճախել 1659 աշակերտ, որոնցից 1264-ը սովորել է X-XII դասարաններում: Մանկավարժական դրույքների թիվը այդ դպրոցներում 137 է, ուսուցիչների թիվը՝ 142, ընդամենը աշխատողների թիվը՝ 233:

«Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության մեջ ընդգրկված մարզի 4 Դպրոց-կենտրոններին (Արտաշատ քաղաքի N6, Այնթապի N2, Արարատ գյուղի N2 , Վեդի քաղաքի N2) ՀՀ կառավարության որոշմամբ ավելացել է ևս 8 դպրոց ( Արտաշատ քաղաքի N1, N2, N3, N5, Միսավան, Սուրենավան, Զորակ, Մասիս քաղաքի N1) :

Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը էականորեն կախված է ուսուցչական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվել է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը: Դասավանդման մեթոդիկայի կատարելագործման նպատակով ամեն տարի մարզի ուսուցիչների 1/5-ը մասնակցել են դպրոց կենտրոններում և Կրթության ազգային ինստիտուտի Արարատի մասնաճյուղում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

2013թ. կրթության բաժնի կողմից համակարգվել է մարզի 604 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորման նախապատրաստական աշխատանքների գործընթացը: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի համաձայն՝ 2011-2014թթ. Արարատի մարզում պարզ ընթացակարգով ատեստավորվել է 1769 ուսուցիչ:

Մարզում նպատակային աշխատանք է տարվել <<Դասագրքերի շրջանառու հիմնադրամի>> շրջանակներում աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարի դպրոցների պահանջարկի հիման վրա աշակերտները ապահովվում են դասագրքերով: Հարկ է նաև նշել, որ դպրոցները կատարել են համապատասխան ներդրումներ դպրոցի բանկային իրենց ենթահաշիվներին՝ ապահովվելով դասագրքերի 100 տոկոս վերարտադրություն:

2013 թվականի ընթացքում դպրոցներին են բաշխվել ԴՇՀ-ի համակարգով հրատարակված 61405 և պետական բյուջեի միջոցներով տպագրված 52175 անվճար դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ: Սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցների բանկային ենթահաշիվներին փոխանցվել է 9 948.6 հազար դրամ գումար:

Մարզի դպրոցական շենքերի և շինությունների պահպանումը և շահագործումը՝ հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում է ՀՀ կառավարության և Արարատի մարզպետարանի ուշադրության կենտրոնում, և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալները ավելանում են:

2011–2013թթ ընթացքում մարզի 95 դպրոցներում ՀՀ պետական բյուջեի միջոցներով և տարբեր ծրագրերով իրականացվել են տարաբնույթ շինվերանորոգման աշխատանքներ /տանիքի վերանորոգում, պատուհանների տեղադրում, ջեռուցման համակարգի կառուցում, մասնակի նորոգում, հիմնանորոգում և կառուցում/: Կառուցվել է 2 դպրոցական շենք Հնաբերդ, Միփանիկ գյուղերում: 2008 թ-ից կառուցվում է Վարդաշեն գյուղի նոր դպրոցական շենքը, որը շահագործման կհանձնվի սեպտեմբերի 1-ին:

Չնայած վերջին երեք տարվա ընթացքում իրականացվել են ավելի քան 5.3 մլրդ դրամի աշխատանքներ, սակայն ունենք դեռ չլուծված խնդիրներ:

Մարզի թվով 51 դպրոց առաջնահերթության սկզբունքով անհրաժեշտ է ընդգրկել ՀՀ պետական կրթական օբյեկտների հիմնանորոգման ծրագրում:

Մարզի 6 դպրոցական շենքերի վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի / Հովտաշատ, Վանաշեն, Նոր Ուղի, Շաղափ, Լուսառատ և Լանջառ/, շենքերը գտնվում են վթարային վիճակում և հրատապ ամրացման կարիք ունեն:

Արևարույր գյուղի գործող դպրոցի շենքը դիտագնական գնահատմամբ գտնվում է անմխիթար վիճակում: Նպատակահարմար է կառուցել նոր դպրոցական շենք:

Հրատապ է նաև լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը: Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներից լոկալ ջեռուցման համակարգ ունի 71-ը: Մնացած 36 դպրոցներում ջեռուցումը կազմակերպվում է էլեկտրական սալիկներով:

Մարզի դպրոցներում առկա է 1271 համակարգիչ, 937 համակարգչային սարքավորումներ, 116 համակարգչային դասարան:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով:

Տարրական կրթության մատչելիությունը բարելավելու համար Պարենային համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մարզի 89 դպրոցների տարրական դասարանների 12 415 երեխաների տրամադրվում է դպրոցական սնունդ, այդ թվում՝ 9 429 երեխաների տրվում է դպրոցական տաք սնունդ, իսկ 2 986 երեխաների՝ սառը /չոր/ սնունդ:

Չնայած իրականացվող միջոցառումներին՝ կրթական հաստատություններում ներկայումս գրեթե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումները և նյութերը: Դպրոցները խիստ կարիք ունեն առարկայական դիդակտիկ պարագաների, համակարգչային ժամանակակից տեխնիկայի:

Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդի գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության հիմնական մասը հնամաշ է, իսկ մի մասը պիտանի չէ օգտագործման՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական բնույթ են կրում: Մարզում միայն անցած ուսումնական տարվա ընթացքում մարզպետի համապատասխան որոշումներով փոխվել է խորհրդի 59 անդամ: Խորհուրդների կազմի փոփոխության պատճառով խորհուրդների նոր անդամները տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Անհրաժեշտ է վերապատրաստել խորհուրդների անդամներին և իրականացնել խորհրդի գործունեության կազմակերպման իրավական փաթեթի լրամշակում:

Դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում լուրջ աջակցություն ցուցաբերել դպրոցին՝ համարելով, որ դա պետության խնդիրն է:

**Վերը նշվածով ներկայացվեց մարզի հանրակրթության բնագավառում առկա պայմանները և գործոնները, որոնք կոչված են պետական պատվերի կատարմանը, այն է՝ հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան ուսուցման և դաստիարակչության կազմակերպումը:**

**Փորձեն ներկայացնել արդյունքները:**

Ուսման տարեկան առաջադիմությունը մարզի հանրակրթական դպրոցներում կազմում է 99.4 %, որակը՝ 38.9%:

3925 աշակերտ արժանացել է գովասանագրերի, 47 աշակերտ՝ հատուկ նմուշի վկայականի, 2-ը՝ գերազանցության մեդալի /Մարմարաշենի և Լանջազատի միջնակարգ դպրոց/:

Չնայած մարզի 63 դպրոցներում ուսման առաջադիմությունը կազմում է 100% սակայն մի շարք դպրոցներում այն ցածր է: Այգեստանի միջնակարգ դպրոցում այն կազմում է 90.2, Կանաչուտի դպրոցում 92.5, իսկ Հովտաշատի դպրոցում 95.8%:

Ցածր ցուցանիշներով ուսման որակ է ապահովվել Ջրահովիտի /14.8%/ և Նոր Կյուրիների /22%/ միջնակարգ դպրոցները:

Ուսուցման կազմակերպման անհրաժեշտ պայման է աշակերտի մասնակցությունը դասապրոցեսին, որը ամրագրված է Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված աշակերտի պարտականությունների մեջ:

Անցած ուսումնական տարվա ընթացքում կրթության բաժնի կողմից պարբերաբար իրականացվել է վերահսկողություն աշակերտների հաճախումների նկատմամբ: Վերահսկվել են նաև բացակայությունները դասամատյանում գրանցելու գործընթացը:

Անցած ուսումնական տարվա դպրոցների գործունեության վերաբերյալ դպրոցներից ընդունված հաշվետվությունների վերլուծությունը ցույց տվեց, որ մարզում 200 և ավելի ժամ բացակայություն ունի 51 աշակերտ, 120-200 ժամ բացակայել է 135 աշակերտ:

Մի շարք դպրոցներում ցածր է եղել աշակերտների հաճախելիությունը: Մասնավորապես Մասիս քաղաքի N4 հիմնական դպրոցում 3 աշակերտ ունի 200 և ավելի ժամ, իսկ 29 աշակերտ/աշակերտների 11%/ 120-200 ժամ բացակայություն, Բարձրաշենի միջնակարգ դպրոցում 2 աշակերտ ունի 200 և ավելի ժամ, իսկ 9 աշակերտ/աշակերտների 5%/ 120-200 ժամ բացակայություն: Նշված հանգամանքը մտահոգության տեղիք է տալիս առավել ևս, երբ դպրոցները ֆինանսավորվում են աշակերտ-թվով:

Մտահոգիչ է նաև աշակերտների գնահատականների օբյեկտիվության խնդիրը: Գիտելիքների արտաքին գնահատման ժամանակ նկատվում են էական տարբերություններ աշակերտների փաստացի գիտելիքների և տարեվերջյան գնահատականների միջև: Պատճառներից մեկը այն է, որ ուսուցիչները աշակերտների գիտելիքները գնահատելիս առաջնորդվում են ոչ թե առարկայական չափորոշիչների պահանջներով, այլ հասարակական դիրք, բարեկամ, միջնորդություն, ծանոթություն հասկացություններով: Գնահատականների արհեստական բարձրացումը կրթության որակի բարձրացման խոչընդոտներից

մեկն է, եթե ոչ ամենակարևորը: Այս մոտեցման արդյունքում մենք վաստակում ենք աշակերտի չհիմնավորված բավարարվածություն և ծնողի անտարբերություն:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները: Ամեն ինչ արվել է օլիմպիադայի մասսայականությունը, օբյեկտիվությունը և որակը բարձրացնելու ուղղությամբ:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցել է 1717 աշակերտ: Օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքներով 381 աշակերտ մասնակցել է մարզային, 94-ը՝ հանրապետական փուլերին:

Օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցած աշակերտների 36% արժանացել է դիպլոմների և գովասանագրեր, այդ թվում՝ 2-ը արժանացել են 1-ին, 7-ական աշակերտներ՝ 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների, 17-ը՝ գովասանագրերի:

Իրենց ակտիվությամբ և ձեռք բերված արդյունքներով լավ ցուցանիշներ են ցուցաբերել Մխչյանի, Արալեզի, Նոր Խարբերդի N1 և N2, Դարակերտի, Նորաշենի և այլ դպրոցներ:

Օլիմպիադայում իրենց լավ դրսևորած աշակերտները և նրանց ուսուցիչները մշտապես գտնվել են մարզպետ պարոն Ռուբիկ Աբրահամյանի ուշադրության կենտրոնում, որի վկայությունը մարզպետարանում կազմակերպված ընդունելությունն էր, որտեղ դպրոցականները պարգևատրվեցին մարզպետի պատվոգրերով և շնորհակալագրերով:

Օլիմպիադայի արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև ձեռք բերված հաջողություններին, այնուամենայնիվ, աշակերտների առաջադիմությունը շարունակվում է ցածր մնալ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ինֆորմատիկա առարկաներից: Ինֆորմատիկա առարկայից ընդամենը 1 աշակերտ է մասնակցել հանրապետական փուլին: Ինֆորմատիկայի խիստ անբավարար արդյունքը ցույց է տալիս, որ այդ առարկայի դասավանդման դրվածքը գրեթե բոլոր դպրոցներում ցածր մակարդակի վրա է, քանի որ այդ անհրաժեշտ և ժամանակակից առարկան դասավանդում են ոչ մասնագետներ կամ մասնագիտական ցածր գիտելիքներ ունեցող ուսուցիչներ:



Պետական միասնական քննությունները կազմակերպելու համար քննական կենտրոններ են ընտրվել Արտաշատ քաղաքի N1 և N4 հիմնական դպրոցները: 2014 թվականի միասնական քննություններին մասնակցելու համար դիմում հայտ է ներկայացրել մարզի հանրակրթական դպրոցների 883 շրջանավարտ, որոնք հանձնելու են 1703 քննություն: Դիմորդներից 711-ը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ: 271 քննություններից դիմորդները ստացել են 18-20 միավոր:

Աճող սերնդի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ռազմահայրենասիրական աշխատանքների կազմակերպումը հանրակրթական դպրոցներում: Այս գործում մեծ դեր ունի զինղեկ ուսուցիչը: Մարզի 112 դպրոցում պետական ուսումնական պլանով նախատեսված իրականացվում է ՆԶՊ առարկայի դասավանդումը՝ հիմնականում արհեստավարժ մասնագետների կողմից (110 զինղեկներից 72-ը ունեն բարձրագույն, 28-ը՝ միջին մասնագիտական կրթություն): Նրանցից 105-ը ունեն սպայական կոչումներ :

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, ռազմադաշտային պարապմունքներ, ինքնաձիգով և մարտական փամփուշտներով կրակային պատրաստության պարապմունքներ:

Մարզում գործող 112 հանրակրթական դպրոցից 110 հանրակրթական դպրոց ունի նախնական զինվորական պատրաստության դասասենյակներ, 106 դպրոց ունի ուսումնական զենք և զինամթերք:

<<Հայոց արծիվներ>> հասարակական կազմակերպության կողմից մարզի բոլոր դպրոցներին տրամադրվել են օդամղիչ հրացաններ:

Անց են կացվել <<Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր>> մրցույթի մարզային փուլում հաղթող է ճանաչվել Նոր ուղու միջնակարգ դպրոցի թիմը, որը հանրապետական փուլում գրավել է 4-րդ տեղը, իսկ առանձին մարզաձևերից մասնակիցները պարգևատրվել են պատվոգրերով:

<<Տարվա լավագույն գինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>> մրցույթի մարզային փուլի հաղթող է ճանաչվել Քաղցրաշենի միջնակարգ դպրոցի գինղեկ Յուրիկ Մկրտչյանը:

Հանրակրթական դպրոցների գինղեկների աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու համար տարածքային գինկոմիսարիատների անմիջական մասնակցությամբ անցկացվել են ամենամյա ուսումնական սեմինար-պարապմունքներ:

Մարզի հանրակրթական դպրոցները համագործակցել են արտակարգ իրավիճակների մարզային կառույցի հետ, կազմակերպվել են սեմինար-պարապմունքներ Արարատի մարզային փրկարարական վարչության ներկայացուցիչների մասնակցությամբ: Մարզի դպրոցների հետ ճշտվել են ՔՊ և ԱԻ տարեկան պլանները:

Կատարված դրական աշխատանքի համար մի խումբ գինղեկներ արժանացել են պաշտպանության և կրթության և գիտության նախարարների մեդալների և պատվոգրերի:

Մարզային ենթակայության 107 դպրոցնի 2-4-րդ դասարաններում դասավանդվում է <Շախմատ> առարկան: Բոլոր դպրոցներում առարկան դասավանդում են վերապատրաստման դասընթացներ անցած և որակավորման հավաստագիր ստացած ուսուցիչներ: Բոլոր դպրոցները ունեն շախմատի դասասենյակներ, որոնք ապահովված են համապատասխան գույքով և դիդակտիկ պարագաներով: Պարբերաբար առարկան դասավանդող ուսուցիչների համար կազմակերպվում են սեմինար պարապմունքներ: Բարձր մակարդակով է անցկացվել շախմատ առարկայի օլիմպիադան:

Անհանգստացնողն այն է, որ դպրոցներում դասավանդող մասնագետներից ոչ բոլորն ունեն մանկավարժի որակավորում, հետևաբար դպրոցների տնօրենները լուրջ խնդիր ունեն նրանց գինելու մեթոդա-մանկավարժական հմտություններով:

2014թ դպրոցների ֆինանսավորումը կատարվել է նոր մեխանիզմով, որը հիմնված է մինչև 100, 101-300 և 301 ու ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար

սահմանված ոչ ուսուցչական՝ վարչական, ուսումնաօժանդակ աշխատակազմի տիպային նվազագույն հաստիքացուցակի վրա, որի կիրառումը անհրաժեշտություն է առաջացրել դպրոցներում կատարելու կրճատումներ:

Մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովը դպրոցներից ընդունել է խորհուրդի հավանությանը արժանացած հաստիքացուցակները, ուսումնասիրել է դրանք և քննարկել յուրաքանչյուր հաստիքային միավորի պահելու անհրաժեշտությունը: Արդյունքում 2014թ մարտի 1-ից մարզի հանրակրթական դպրոցներում կրճատվել են 70 վարչական և 321 ուսումնաօժանդակ հաստիքային միավորներ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հաջողության գրավականը անշուշտ ուսուցման և դաստիարակության ճիշտ զուգակցումն է:

Մարզի տարածքում պարբերաբար կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ, որոնց հաղթողները մասնակցել են հանրապետական փուլերին:

Դպրոցներում հաճախակի կազմակերպված գեղեցիկ և բազմաբովանդակ միջոցառումները, հետաքրքիր բաց դասերը, գիտա-պրակտիկ կոնֆերանսները, տարաբնույթ, բազմաբովանդակ միջոցառումները մեծապես նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

Գրեթե բոլոր դպրոցներում կազմակերպվել են «Մեր մեծեր»-ին նվիրված միջոցառումներ:

9-12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել են բաց դասեր, հուշ-երեկոներ, դասախոսություններ՝ նվիրված հայոց նորագույն պատմության ընթացքում տեղի ունեցած ազատագրական շարժմանը, ազգային ինքնագիտակցության զարթոնքին, Սումգայիթի ջարդերի զոհերի հիշատակին:

Կազմակերպվել է «Արցախ՝ ի՛մ սեր, ի՛մ հպարտություն», «Երևանը համայն հայության մայրաքաղաքն է», «Մենք տարբեր ենք, մենք հավասար ենք, մենք միասին ենք» թեմաներով շարադրությունների մրցույթներ և լավագույն աշխատանքները ներկայացվել են ԿԳ նախարարություն:

«Կենգուրու» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթին Արարատի մարզից մասնակցել է 70 դպրոցի 3256 երեխա, որոնցից հատուկ մրցանակի է արժանացել 70, իսկ լավագույնի՝ 19 երեխաներ:

Մարզի 395 դպրոցականներ ակտիվ մասնակցություն ունեն նաև «Ռուսական արջուկ. լեզվաբանություն բոլորի համար» միջազգային մրցույթին:

Живая классика պատանի ընթերցողների մրցույթի մարզային փուլին հաղթել և հանրապետական փուլին մասնակցել է մարզի 3 աշակերտ:

Մարզի դպրոցականները ակտիվորեն մասնակցել են «Հանրապետական ասմունքի մանկապատանեկան 6-րդ մրցույթ-փառատոնին»՝ նվիրված հայ մեծանուն գրողներ Համո Սահյանին և Պարույր Սևակին:

Մարզի դպրոցականները մասնակցել են «Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին» խորագրով համահայկական մանկապատանեկան նկարչական 4-րդ մրցույթ-փառատոնին

ՀՀ ոստիկանությունը 2014թ մայիսի 17-ին, մարզի դպրոցներում ոստիկանության բարձրաստիճան սպաների մասնակցությամբ անցկացրել է դաս՝ «Դասը վարում է ոստիկանը» թեմայով:

Մեր կողմից տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ դպրոցների մեծամասնությունում «Վերջին գանգ», «Վերջին դաս», «Հրաժեշտ դպրոցին» գեղեցիկ և համեստ արարողությունները կյանքի են կոչվել, սակայն դեռևս անելիքները շատ են այդ գործում, քանի դեռ ի սպառ չեն վերացել նշված միջոցառումների անցկացման կապակցությամբ կատարվող դրամահավաքության երևույթները, ավարտական խրախճանքային միջոցառումներ կազմակերպելու դրսևորումները:

Անցյալ ուստարում ԿԳՆ կողմից կազմակերպված «Լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Լավագույն դաստիարակ» մրցույթի մարզային փուլում հաղթող են ճանաչվել Սիսավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Նարինե Գալստյանը, Արարատ ք. N 3 հիմնական դպրոցի քիմիայի ուսուցչուհի Կարինե Մանուկյանը, Արարատ ք. N 2 մանկապարտեզի դաստիարակ Մարին Ենոքյանը:

Հայ առաքելական եկեղեցու կողմից կազմակերպված <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթի մարզային փուլում հաղթող են ճանաչվել Նորաբացի միջնակարգ դպրոցի դասվար Մանուշակ Մելքունյանը, Մասիսի ավագ դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Զոյա Գրիգորյանը, Փոքր Վեդու դպրոցի հայոց պատմություն առարկայի ուսուցչուհի Փառիկ Նաղդայանը:

Մրցույթի հետ կապված մեր պահանջը այն է, որ դպրոցները մեծացնեն ուսուցիչների ակտիվությունը, ոգևորեն և խրախուսեն երիտասարդ ուսուցիչների ստեղծագործական կարողությունները: Միաժամանակ կառաջարկեինք նաև մրցույթի Բնագիտություն առարկայացանկի մեջ ընդգրկել աշխարհագրություն առարկան: Մրցույթի նկատմամբ հետաքրքրությունը կմեծանա, եթե մշակվի ուսուցիչների մանկավարժական և ստեղծագործական կարողությունները ստուգող թեստային առաջադրանքների շտեմարան, ինչը մենք ակնկալում ենք Կրթության ազգային ինստիտուտից:

Երեխաներին դպրոցին նախապատրաստելու համար անգնահատելի է նախադպրոցական հաստատությունների դերը: Մարզում գործող 98 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված է 6567 երեխա, որից 5983-ը 75 մանկապարտեզներում, իսկ 587-ը դպրոցահեն 23 հաստատություններում:

<<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում և մեր համայնքների ներդրմամբ մարզի 17 ուսումնական հաստատություններում իրականացվում է նախադպրոցական կրթական միկրոծրագիր: Հաշվետու ժամանակահատվածում 6 հանրակրթական դպրոցներում (Աբովյան, Արաքսավան, Նշավան, Արարատ գ. N2, Լուսաշող, Դաշտավան) Համաշխարհայի բանկի 35 մլն դրամ գումարի ներդրմամբ նույնպես բացվել են նախակրթարաններ:

Մարզի 75 մանկապարտեզներից 3-ը գործում է կարճաժամկետ խմբերով, աշխատում են 4 ժամյա ռեժիմով /Պ.Սևակ,Բուրաստան, Նիզամի /:

2012-2013թ.թ. շահագործման է հանձնվել 2 նոր մանկապարտեզ՝ Այնթափայ համայնքում 140 և Մարմարաշեն համայնքում 100 երեխայի համար:

Դրական աշխատանքի կողքին ունենք նաև չլուծված հարցեր և թերություններ:

Նախադպրոցական հաստատությունների ճնշող մեծամասնությունը ունի փափուկ և կոշտ գույքի, ֆիզիկական դաստիարակության համար համապատասխան մարզագույքի, հիգիենայի պարագաների կարիք :

Ն/դ ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքներին զուգահեռ առավելապես կարևոր է սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը և երեխաների սննդի կազմակերպումը: Մարզպետարանի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 35 մակապարտեզում կա տաք և սառը հոսող ջրի անհրաժեշտություն, 30 մանկապարտեզում ոռոգման ջրի բացակայության պատճառով մանկապարտեզների տարածքները կանաչապատված չեն: Համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրում ենք այն փաստի վրա, որ որոշ մանկապարտեզներում չեն պահպանվում ճաշատեսակների ճիշտ համադրությունը և առաջարկում ենք պահպանել 2013թ առողջապահության նախարարի կողմից հաստատված երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները, սանիտարական կանոնները և նորմերը:

Մարզի 14 համայնքներում դեռևս չկան նախադպրոցական հաստատություններ: Մարզում շուրջ տարին աշխատում է ընդամենը 67 մանկապարտեզ, մնացած 31 համայնքների ղեկավարները վերազանցում են իրենց լիազորությունները և ժամանակավոր դադարեցնում մանկապարտեզների բնականոն գործունեությունը՝ խախտելով <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջները:

Նշենք նաև, որ ուսումնասիրվել է կրթության բնագավառում մարզի 31 համայնքների ղեկավարների գործունեությունը :

Թեև մեր մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չունենք, սակայն դժվար հաճախող երեխաներ ցավոք ունենք, որոնք հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ են:

ՀՀ <<Կրթության մասին>> օրենքի պահանջներին համապատասխան համայնքների ղեկավարները պարտադիր լիազորության կարգով պետք է իրականացնեն նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովեն նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններ:

Երեխաների ամառային հանգիստը բովանդակալից կազմակերպելու համար խրախուսանքի արժանի է Բուրաստան համայնքի ղեկավար Աշոտ Թարվերդյանի նախաձեռնությունը, համայնքում շուրջ երկու ամի բակային ճամբար կազմակերպելու համար, որը ակտիվություն և հետաքրքրություն մտցրեց ինչպես համայնքի երեխաների այնպես էլ բնակիչների առօրյայում:

Ամփոփելով խոսքս ներկայացնեմ մարզում առկա խնդիրներ, որոնք նոր ուսումնական տարում լուծման կարիք ունեն:

1. Նկատվում են չհիմնավորված էական տարբերություններ տարբեր դպրոցների միևնույն հաստիքով աշխատողների դրույքաչափերի միջև: Դպրոցի կենտրոնական օղակը ուսուցիչն է, և մյուս բոլոր աշխատողների դրույքաչափերը համեմատական պետք է լինեն դպրոցի մանկավարժական դրույքաչափին: Դպրոցի տնօրենները դրույքաչափերը ձևավորելիս պետք է հաշվի առնեն նաև դպրոցում սովորող աշակերտների թվաքանակը և դպրոցի որակական ցուցանիշները:

2. Լուրջ խնդիրներ են ծագել ուսուցիչներին մեկ դրույք ժամաքանակով ապահովելու գործում: Ուսուցիչներին մեկ դրույքով ապահովվելու համար անհրաժեշտ է կրճատել շուրջ 770 ուսուցչի, որը մարզում կառաջացնի սոցիալական լուրջ խնդիր:

Օպտիմալացման անհրաժեշտություն է առաջացել գրեթե բոլոր դպրոցներում:

Դպրոցներում գրեթե չի կատարվում սերնդափոխություն, մանկավարժական կոլեկտիվների ծերացումը խիստ նկատելի է: Ցավալի է, որ մարզում հարյուրավոր նորավարտ, նույնիսկ մանկավարժական բուհերը գերազանցությամբ ավարտած շրջանավարտներ այսօր գրկված են աշխատելու հնարավորությունից:

Խիստ հարգելով և բարձր գնահատելով մեր դպրոցներում աշխատող 209 կենսաթոշակային տարիք ունեցող մանկավարժներին՝ կարծում եմ, որ դպրոցների տնօրենները բարձր մակարդակով պետք է կազմակերպեն մեր մանկավարժներին վաստակած հանգստի ուղարկելու արարողությունները՝

ստեղծելով հնարավորություն բարձրացնելու մնացած ուսուցիչներին ուսումնական ծանրաբեռնվածությունը:

3. Դպրոցների տնօրենները իրենց աշխատաժամանակի մեծ մասը տրամադրում են ՊՈԱԿ-ի աշխատանքների կազմակերպման գործառույթներ իրականացնելու վրա և քիչ ժամանակ են տրամադրում ուսուցման որակի վերահսկողությանը: Այստեղ անհրաժեշտ է բարձրացնել փոխտնօրենների ակտիվությունը: Նոր ուսումնական տարում պլանավորվում է փոխտնօրենների հետ հաճախակի կազմակերպել սեմինար-խորհրդակցություններ, կլոր սեղաններ, լավագույն փորձի փոխանակում:

4. Մարզի 2-6 տարեկան երեխաների ընդամենը 33 տոկոսն է ընդգրկված նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Անհրաժեշտ է մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիությունը՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար:

Ազգային ժողովի պատգամավոր հարգարժան տիկին Պաղոսյան, հարգարժան փոխնախարար պարոն Մկրտչյան թույլ տվեք արտահայտել նաև մեր մտահոգությունը հետևյալի վերաբերյալ.

Բոլորս ականատես ենք այն հանգամանքին, որ վերջին տարիներին հանրակրթության բնագավառում լուրջ փոփոխություններ են կատարվել, որոնք, ունենալով ճիշտ ուղվածություն, լավ տրամաբանություն, հավակնում են լինել բարեփոխումներ: Սակայն մտահոգողը այն է, որ այդ բարեփոխումների կյանքի կոչման ուղիների ոչ ճիշտ ընտրությունը այն դարձնում է խոցելի և անարդյունավետ: Մասնավորապես ավագ դպրոցների ցանցի ստեղծումը, դպրոցների ապակենտրոնացումը, մրցութային համակարգի ներդրումը և այլն: Լավ արդյունք ունենալու համար անհրաժեշտ է այդ լավ միտքը կյանքի կոչելու ճիշտ ուղիներ ընտրել՝ հաշվի առնելով նաև մեր ազգային առանձնահատկությունները, քաղաքային և գյուղական դպրոցների առանձնահատկությունները: Բարձր գնահատելով Ձեր բանիմացությունը նշված



ոլորտում՝ ակնկալում ենք Ձեր անմիջական մասնակցությունը և ներդրումը այս հարցում:

Խորհրդակցության հարգելի՛ մասնակիցներ, թույլ տվեք շնորհավորել ձեզ և ի դեմս ձեզ՝ մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվներին՝ նոր ուսումնական տարվա կապակցությամբ և հաստատ համոզմունք հայտնել, որ մենք՝ մանկավարժներս, չենք բավարարվի ձեռք բերածով և սեպտեմբերի 1-ին դպրոց կմտնենք ավելի բարձր պատասխանատվությամբ:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ